



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն N 18-Կ

«26.» 01. 12թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԿՈՂՄԻՑ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2008 Թ.
ՆՈՒԷՄԻ 28-Ի N 479-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մշակույթային օրենսդրության հիմունքների մասին» և
«Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու
կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝

1/ ՀՀ մշակույթի նախարարի կողմից քաղաքացիների ընդունելության
կազմակերպման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2/ քաղաքացիների ընդունելության գրանցաթերթի ձևը՝ համաձայն N 2
հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ մշակույթի նախարարի 2008 թ. հուլիսի 28-ի
«Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության պաշտոնատար
անձանց կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը
հաստատելու մասին» N 479-Ա հրամանը:


3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարին:

ՆԱԽԱՐԱՐ՝

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Կատ.՝ Գ. Դուրգալոյան





ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԿՈՂՄԻՑ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է ՀՀ մշակույթի նախարարի կամ պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը:

2. ՀՀ մշակույթի նախարարությունում քաղաքացիների ընդունելությունն իրականացնում է նախարարը կամ նրա հանձնարարությամբ՝ նախարարի տեղակալը, աշխատակազմի ղեկավարը և աշխատակազմի վարչությունների և բաժինների պետերը:

3. ՀՀ մշակույթի նախարարը քաղաքացիներին ընդունում է յուրաքանչյուր երեքշաբթի՝ ժամը 14:00-18:00-ն:

4. Ընդունելության համար քաղաքացիների նախնական գրանցումն իրականացնում է հասարակայնության հետ կապերի բաժինը /Կառավարական 3-րդ շենքի առաջին հարկում գործող տեղեկատվական կենտրոնի իր աշխատակցի միջոցով/՝ գրանցաթերթում նշելով հերթական համարը, ամսաթիվը, քաղաքացու ազգանունը, անունը, հասցեն, ընդունելության շարժառիթը /հավելված 2, կետ 1, 2, 3/:

5. Հասարակայնության հետ կապերի բաժինը ընդունելության գրանցումը և հաշվառումը իրականացնելուց հետո այն ներկայացնում է նախարարին:

6. Նախարարն իր հայեցողությամբ նշանակում է քաղաքացու հետ հանդիպում անցկացնող պատասխանատու պաշտոնատար անձին կամ քաղաքացուն ընդունում է անձամբ /Հավելված 2, կետ 4/:

7. ՀՀ մշակույթի նախարարի տեղակալները կամ պատասխանատու պաշտոնատար մյուս անձինք քաղաքացիների ընդունելությունը կազմակերպում են սույն կարգի համաձայն:

8. Նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժինը **mulberri** համակարգով ապահովում է քաղաքացիների մակագրված դիմումների տրամադրումը համապատասխան պաշտոնատար անձին:

9. Քաղաքացիների ընդունելությունից անմիջապես հետո տվյալ պատասխանատու անձը գրանցաթերթի վրա կատարում է նշում արդյունքի մասին, ստորագրում և վերադարձնում հասարակայնության հետ կապերի բաժին՝ արդյունքներն ամփոփելու համար:

10. Քաղաքացիների ընդունելության գրանցաթերթերը պահպանվում են նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնում:

Աշխատակազմի ղեկավարի
պաշտոնակատար՝

Վ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

